## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՄՈՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊՐԵՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-ամյակի կապակցությամբ Նորին Վեհափառության Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի կողմից Սովետական Հայաստանի կառավարության ղեկավարներին ուղղված ողջույնը տեղական մամուլում հրապարակվելուց հետո մի խումբ ժուռնալիստներ, կենտրոնական և ռեսպուբլիկական թերթերի թղթակիցներ դիմեցին Նորին Վեհափառության և խնդրեցին Վեհափառ Հայրապետին Իր կարծիքը հայտնել ողջույնի մեջ արտահայտված հարցերի, մասնավորապես այն մասին, թե ինչպես է Նորին Սրբությունը պատկերացնում ու վերաբերվում հայության հայրենիքի միավորման իրականացմանը և հայ ժողովրդին Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու հարցին։

Նոյեմբերի 29-ին Վեհափառ կաթողիկոսի մոտ տեղի ունեցած պրես-կոնֆերանսում Նորին Սրբությունը հայտարարեց հետևյալը.

«Սովետական Հայաստանի կառավարության հրավերով մենք առաջին անգամ բախտ ունեցանք ներկա գտնվելու Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի հոբելյանական նստաշրջանին, Հայաստանում սովետական իշխանության հաստատման 25-ամյակին նվիրված համազգային և համապետական տոնակատարությանը։ Այդ տոնին մենք կրկին անգամ ակնհայտնի կերպով տեսանք Սովետական Միության ժողովուրդների մեծ բարեկամության մարմնավորումը։

«Մեզ ուրախալի էր տեսնել, թե ինչպես Սովետական Միության մեջ բնակվող ժողովուրդների ներկայացուցիչները եղբայրական սիրով ու հարգանքով են վերաբերվում հայ ժողովրդին։

«Մեր երկրում և արտասահմանում ապրող հայերի սրտերը այսօր լի են հպարտությամբ և երջանկությամբ մոխրակույտերի և ավերակույտերի տակից հարություն առած և այժմ ծաղկող իրենց հայրենիքի՝ Սովետական Հայաստանի համար, որը տոնում է իր ազատ ու բերկրալի գոյության քսանհինգամյակը։

«Եվ այսօր, մենք խորին դառնությամբ վերհիշեցինք հարյուր հազարավոր հայերի մասին, որոնք բռնի կերպով տարագրված են հայրենիքից, սփռված ամբողջ աշխարհով մեկ, որոնք երազում են իրենց նախահայրերի սուրբ հողի մասին, որի վրա նրանք ապրել են ավելի քան երեք հազար տարի։ Մեծ դառնությամբ հիշեցինք այն հայերի մասին, որոնք զրկված են հայ ժողովրդի վերածնության համազգային մեծ տոնին մեզ հետ միասին ներկա գտնվելու երջանկությունից։

«Արտասահմանի հայության ճակատագրի մասին Մեր հոգատարությունը և նրանցից ստացած բազմաթիվ նամակներն ու հեռագրերը Մեզ մղեցին դիմելու երեք մեծ տերությունների ղեկավարներին՝ Ստալինին, Տրումենին և Էտլիին, խնդրելով վերացնել բազմաչարչար հայ ժողովրդի վերաբերմամբ թույլ տրված պատմական մեծ անարդարությունը։ Մեր դիմումով Մենք խնդրում ենք՝ Թյուրքիայից վերցնել նրա կողմից բռնի կերպով զավթված և այժմ ամայի հողերը, վերադարձնել նրանց վաղեմի տերերին և այդ հողերը միացնել Սովետական Հայաստանին։ Դա գաղթական հայերին հնարավորություն կտա մի ընտանիքի մեջ ապրելու իրենց արյունակից եղբայրների հետ, աշխատելու և զարգացնելու իրենց ազգային կուլտուրան։

«Եվ դա արդարացի փոխհատուցում կլինի այն վիթխարի զոհերի ու ինքնազոհությունների համար, որ հայ ժողովուրդը բերել է հանուն միավորյալ դեմոկրատական ազգերի գործի, հանուն դեմոկրատիայի հաղթանակի։

«Մեր Տեր Աստվածը թող օգնի մեզ այս արդար և սուրբ գործում»։

***

Վեհափառ Հայրապետը թղթակիցներին հանձնեց երեք մեծ տերությունների ղեկավարներին ուղարկած Իր դիմումի բնագիրը որ զետեղված է մեր ամսագրի ներկա համարում։